

## ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐՅԱՆԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՎ ԶԱՂԱԶԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ XIX դՊՐԻ 90 -ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

### Կ. Գ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

XIX դարի 80-90-ական թվականներին արևմտահայ գրականության և հրապարակախոսության ականավոր դեմքերից մեկը Արփիար Արփիարյանն էր: Սկզբունքային, հախտուն, անհաշտ բնավորության տեր, հայրենասեր մի գրող, որի համար Արդուլ Համիդի բռնապետության տարիներին հասարակական, քաղաքական, խմբագրական աշխատանք ծավալելը շատ դժվար էր: Սա համիդյան ռեակցիայի ամենավայրագ շրջանն էր, երբ հայերի նկատմամբ հալածանքը հասել էր գագաթնակետին: Հենց 1890-ական թվականների սկզբներին Արփիարյանն սկսեց իր քաղաքական, կուսակցական ակտիվ գործունեությունը:

Պոլսում հայ մտավորականները գտնվում էին ծանր վիճակում: Սահմանադրությունն իսպառ մոռացվել էր: Թուրքիայի Ազգային ժողովում հայերի հետ կապված որևէ հարցի շուրջ հնարավոր չէր քննարկումներ ծավալել: Արգելված էին մարդկանց հավաքները, անգամ ընտանեկան հավաքություններում անպակաս էին սուլթանին ծախված լրտեսները:

Բնականաբար այս ամենը խիստ բացասաբար էր անդրադարձնում հատկապես մամուլի վրա: Դեռևս 1881 թ. Արփիարյանը Թիֆլիսի «Մշակում» գրում էր. «Երկաթե ձեռք մը կը ծանրանա Կ. Պոլսո մամուլին վրա»<sup>1</sup>:

Ու քանի որ Պոլսում անհնար էր հայկական հարցերի հետ առնչվող որևէ խնդիր բարձրացնել, Արփիարյանը ծածկանուններով թղթակցում էր արտասահմանյան հայ մամուլին: Նա նյութեր էր տպագրում Մարսելում լույս տեսնող՝ իր համախոհ և բարեկամ Մ. Փորթուզալյանի «Արմենիա» պարբերականում, որը խոշոր դեր էր կատարում արևմտահայ քաղաքական մտքի զարգացման ուղղությամբ: Թերթի հիմնական նպատակն էր հայ ժողովրդին պայքարի հանել սուլթանական բռնատիրության դեմ: «Արմենիայի» համարները մեծ դժվարությամբ եվրոպական նավատիկների ջանքերով թափանցում էին արյունոտ սուլթանի մայրաքաղաքը կամ այլ նավահանգիստներ, կարդացվում, ձեռքից ձեռք անցնում, հասնում մինչև գավառները, խանդավառում երիտասարդներին:

Արփիարյանն ավելի հաճախ թղթակցում էր Թիֆլիսի «Մշակին»՝ Հայկակ կեղծանունով: Երկու թերթում էլ նա ճշմարտացի կերպով ներկայացնում էր Պոլսում և հատկապես Արևմտյան Հայաստանում տիրող վիճակը:

1889 թ. մի խումբ կովկասահայ ուսանողներ ժնկում հիմնադրում են հնչակյան կուսակցությունը, որը, իր ծրագրում սոցիալիզմին տեղ տալով հանդերձ, առաջնահերթ խնդիր էր համարում ազգային-ազատագրական շարժումը, հատկապես Արևմտյան Հայաստանի ազատագրությունը:

Պոլսահայերի տրամադրությունը շոշափելու և իրենց գործունեության համար հող նախապատրաստելու նպատակով նույն 1889 թ. Թիֆլիսից Կ. Պոլիս եկավ հնչակյան կուսակցության առաջնորդներից մեկը՝ Ռ. Խանազատը: Թիֆլիսում «Մշակի» կողմնակիցները նրան խորհուրդ էին տվել Կ. Պոլսում իր քոլոր ծրագրերը վստահել միայն ու միայն կովկասահայությանը այնքան լավ ծանոթ ու սիրելի Հայկակին՝ Արփիարյանին: Ինքը՝ Խանազատը, Հայկակի թղթակցությունները հափշտակությամբ կարդացողներից էր: «Թե ես և թե ընկերներս, գրում է Խանազատը, - Հայկակին չէիք ճանաչում անձամբ, բայց նրա թղթակցությունները «Մշակ»-ում մեզ միշտ հմայում էին և գիտնալով, թե ինչպես Գ. Արծրունին նրան սիրում ու գնահատում է, մենք մի րոպե անգամ չէիք կասկածում, որ Հայկակը կատարելապես վստահելի անձնավորություն է լինելու»<sup>2</sup>:

<sup>1</sup> «Մշակ», 1881, No 15:

<sup>2</sup> «Մշակ», 1908, No 68:

Մինչ այդ պոլսահայերը ոչինչ չգիտեին հնչակյան կուսակցության ծրագրերի մասին, բայց բարակ թղթի վրա տպագրված փոքրադիր «Հնչակ» թերթի Պոլիս թափանցած մի քանի համարներն ընթերցվում էին մեծ հետաքրքրությամբ:

Արփիարյանը իր հիշողություններում և հողվածներում բազմաթիվ անիթներով փորձել է ցույց տալ, որ ինքը հնչակյան կուսակցության մեջ մտել է ոչ թե 1889 թ.: Ռուբեն Խանազատի Պոլիս գալու օրերին, այլ 1895-ին: Սակայն հետազոտությունները ցույց են տալիս, որ նա թեև ձևականորեն չի արձանագրվել որպես կուսակցության անդամ, բայց հենց այդ թվականից սկսած բավականաչափ սերտ կապեր է ունեցել հնչակյանների հետ:

Արփիարյանը պատմում է, որ Խանազատի ու Պոլսեցի մի քանի երիտասարդների միջև տեղի ունեցած զրույցների ժամանակ չի շոշափվել մասնաճյուղ ստեղծելու հարցը, այլ պարզապես իրենց առաջարկ է եղել Կ. Պոլսում ստեղծել հեղափոխական մի խմբակ, որի նպատակը պետք է լիներ կապ պահպանել հատկապես հնչակյանների կենտրոնի հետ: Ահա այդ առաջարկն է, որ ըստ Արփիարյանի ընդունել են իրենք ու կենսագործել:

Արփիարյանի ու Խանազատի այս ճակատագրական հանդիպումը տեղի է ունեցել «Արևելք» թերթի խմբագրատանը:

Խանազատի հուշերից երևում է, որ Արփիարյանը, ծանոթանալով հնչակյանների ծրագրերին, իսնդրավառվել է հատկապես ազգային-ազատագրական պայքարին վերաբերող մասով, իսկ ծրագրի սոցիալիզմին վերաբերող մասը նրան թվացել է անժամանակ: «Հայաստանի մեջ սոցիալիզմի գաղափարներով պարապելը,- ասել է նա,- շատ կանուխ է. ցախ պետք է Հայաստանը ազատել օսմանյան լուծեն և ապա երբ Բուլղարիայի վիճակին ազատ Հայաստան կունենանք, այն ժամանակ կրճանք սոցիալիզմի մասին խորհիլ»: Արփիարյանը մինչև վերջ մնաց այդ կարծիքին, որը դարձավ հնչակյաններից հեռանալու հիմնական պատճառներից մեկը:

Կոնկրետ գործունեության առումով քաղաքական մի դեպք մտածել տվեց Համիդի դեմ ավելի վճռական քայլերի դիմելու մասին: Դա Մուսա բեկի դատավարությունն էր, որը մեծ աղմուկ բարձրացրեց:

Մուսա բեկը ահ ու սարսափի մեջ էր պահում մի ամբողջ գավառի հայությունը՝ սպանություններ, թալան, պահեստների հրկիզում: Եվրոպական մամուլում տպագրվում էին նրա ոճրագործությունների մանրամասները: Նույնիսկ անգլիական պառլամենտում հարցապնդումներ են լինում այդ մարդու սանձարձակությունների մասին: Պահանջվում էր դատի տալ ոճրագործին: Համիդը, որ ամեն կերպ փորձում էր արդարացնել մարդասպանին, չկարողացավ արհամարհել համաշխարհային կարծիքը և հարկադրված Մուսա բեկին կանգնեցրեց դատարանի առջև:

Թեև դատավարությանը ներկա էին նաև եվրոպական դեսպանների ներկայացուցիչներ, հնչեցին մեղադրական ճառեր, սակայն Համիդը, արհամարհելով այս ամենը, ի վերջո ազատ արձակել տվեց Մուսա բեկին՝ զարմանք պատճառելով ամբողջ աշխարհին և խոր հիասթափություն՝ հայ ժողովրդին:

Ահա այդ օրերին էր, որ արդեն իսկ բավականաչափ արմատներ ձգած հնչակյան կուսակցությունը որոշում է զինված ելույթներ կազմակերպել թուրքական կառավարության դեմ: Առաջին ելույթը տեղի ունեցավ 1890 թ. հունիսի 8-ին Էրզրումում: Կառավարությունը, կասկածելով, որ հայոց եկեղեցում զենք է թաքցված, խուզարկեց այն: Հայերը որպես բողոքի ցույց փակում են խանութները և հավաքվում եկեղեցում: Թուրք ոստիկանությունը ուզում է ցրել ամբողջը: Սկսվում է փոխադարձ հրաձգություն, որի հետևանքով հայերը տալիս են 20 սպանված և մի քանի հարյուր վիրավոր:

Թիֆլիսից մի խումբ հնչակյան երիտասարդներ Թալիս են Կ. Պոլիս, այդ թվում՝ Խանազատը: Ստեղծում են մի քանի խմբակներ, կազմում վարչական խորհուրդ: Այդ վարչության մեջ են մտնում Համբարձում Բոլաջյանը (Մուրադ), որն այն ժամանակ Պոլսի բժշկական բարձրագույն ուսումնասրանի ուսանողներից էր, Հարություն Ժանկուլյանը, Միհրան Տամատյանը և ուրիշներ: Արփիարյանը, Բաշալյանը և Հովհաննես Ծահնագարյանը վարչության մեջ չեն մտել, բայց խոստացել են ամեն կերպ օժանդակել գործին:

Կովկասից եկած գործիչների և Կ. Պոլսի երիտասարդների այս հանդիպման արձագանքը եղավ հայ քաղաքական կուսակցությունների կողմից օսմանյան մայրաքաղաքի Գում Գաբու թաղամասում կազմակերպված հայտնի հրապարակային ցույցը, որն ունեցավ տխուր հետևանքներ:

Արփիարյանը գործուն մասնակցություն ունեցավ նախապատրաստմանը, բայց գործնականապես չմասնակցեց ցույցին: Չմայած դրան՝ իրեն պատասխանատու էր համարում կատարվածի համար: Ցույցը սպասված արդյունքը չտվեց: Եվրոպական երկրները անհաղորդ մնացին: Քաղաքական մթնոլորտն ավելի ծանրացավ: Ապագայում իրենց անելիքները որոշելու նպատակով Արփիարյանը մեկնեց Կովկաս: Իմանալով, որ Խանազատը Երևանում է, նա շտապեց այնտեղ: Նրանց միջև եղած խոսակցությունը հայտնի չէ, նրանց կազմած ծրագրերի մասին ոչինչ չգիտենք: Բայց Արփիարյանն իր հուշերում ուշագրավ տեղեկություն է տվել նույն օրերին Թիֆլիսում կայացած մի գաղտնի խորհրդակցության մասին, որին մասնակցել է նաև Գրիգոր Արծրունին: Քննության են առնվել Թուրքիայում կատարված և կատարվելիք դեպքերը, նաև այն հարցը, թե առաջարկվող ցույցերից ու ապստամբություններից հետո կլինի՞ արդյոք ռուսական օգնությունը հայերին:

Արփիարյանը միշտ էլ հայ ժողովրդի փրկությունը կապել է Ռուսաստանի հետ և այդ մասին բավմիջս գրել է «Մշակում»: Բայց այդ օրերին դրությունը լավ չէր նաև Ռուսաստանում: Վերջին 7-8 տարիներին Կովկասում փակվում էին հայկական դպրոցները, բռնագրավվում էին եկեղեցական կալվածքները: Բայց այս ամենը Արփիարյանը համարում էր ժամանակավոր, նա չիդիտեց իր քաղաքական համոզմունքները, երբեք չթեքվեց, չպաշտպանեց այսպես կոչված «անգլոֆիլներին»: Նա գտնում էր, որ պետք է սպասել նպատակավոր քաղաքական դեպքերի, որոնք անխուսափելի էին Ռուսաստանում:

Թիֆլիսում թե՛ Արծրունին, և թե՛ նրա ընկերները, որոնք ըստ երևույթին այդ օրերին հակված էին քաջալերելու, խրախուսելու հնչակյան ցույցը, համոզում են Արփիարյանին ոչ միայն չհրաժարվել սկսած գործից, այլ նախապատրաստել նոր զինված ելույթներ: Այդ նպատակի համար Արծրունին Արփիարյանի տրամադրության տակ է դնում հազար ոսկի:

Հայկակը վերադառնում է Կ. Պոլիս այն ժամանակ, երբ օսմանյան մայրաքաղաքը ապրում էր Գում Գաբուի ցույցի ծանր հետևանքները: Համիդյան պահճորդական բաժինը սկսել էր համատարած ձերբակալություններն ու աքսորը: Հնչակյան ամբողջ մասնաճյուղը քարուքանդ էր եղել: Խմբի անդամներից մի քանիսը կարողացել էին փախչել արտասահման, իսկ մեծ մասը ձերբակալված էր:

Արփիարյանի համար, հասկանալի է, դժվար էր թաքնվել կամ փախուստ տալ: Մի քանի օր հետո նրան նույնպես ձերբակալեցին՝ խուզարկելով բնակարանը, բռնագրավելով նրա բոլոր թղթերը: Արփիարյանը մտռնվել էր իր ընկերներից մեկի՝ Մամբրեի կողմից, որը սկզբում իրեն ներկայացրել էր որպես եռանդուն ու նվիրված հեղափոխական, վայելել բոլորի վրատահությունը և խմբի գաղտնիքները հայտնել ոստիկանությանը: Նա տասնյակ մարդկանց դժբախտության ու աքսորի պատճառ դարձող հայտնի լրտես էր, որի մասին իմացավ ամբողջ Պոլիսը: Արփիարյանն իր ձերբակալության մասին թողել է հետևյալ վկայությունը. «Իմ ձերբակալությանն պատճառն էր Տրապիզոնի կենտրոնեն Համբարձում Բոյաջյանի (Մուրադ) գրված կարգ մը նամակներ, որոնց մեջ անունս հիշատակված էր զանազան պարագաներով: Բոյաջյանի բացակայությանը Մամբրե ինքն առնելով այդ նամակները հանձնած է Նազրմի: Հեղափոխական շատ մը գաղտնիքներ երևան եկան այդ նամակներեն»:

Այս վկայությունից երևում է, որ Արփիարյանը Կ. Պոլսում ճանաչվել է հնչակյան կուսակցության գաղափարներին հարող, որին հայտնի էին շատ գաղտնիքներ, որի օգնությանն էին դիմում շատ հնչակյաններ: Այս կարծիքը հաստատում է ոստիկանության կողմից բռնագրավված նամակներից մեկը, որի հեղինակը Պետրոս Մարիմյանն է: Վերջինս Տրապիզոնից գրել է Պոլսում գտնվող իր ընկերներից մեկին. «Սիրելի Ավո, Պոլիս գալով իսկույն մտտիկ բարեկամացիր Արփիարի հետ: Ան Թիֆլիս էր. տեսնվել է Ա. [ործունի]-ի հետ: Ա. մեծ վստահություն ունի նրան: Հազար ռուբլի տվել է հարսանիքի պատրաստության համար: Հոս տեսնվեցանք. շատ լավ տպավորություն թողեց. անպատճառ լավ բարեկամացիր. ասոր չեն խառնիր Խանը (Ռ. Խանազատ), Վայ Պատրիկյանը և ոչ Մեղավորյանը: Բուն պոլսեցի է օգտակար կրճա ըլլալ»:

Արփիարյանը ձերբակալվեց 1890 թ. նոյեմբերի 9-ին և քանտում մնաց մինչև 1891-ի հունվարի 6-ը: Այդ օրերին համիդյան գործակալները ձերբակալել էին 75 մտավորականների, աչքի ընկնող ազգային գործիչների:

<sup>1</sup> «Մշակ», 1891, № 1:

<sup>2</sup> «Օսթրոմ», 1898, № 12:

Մամուլում տպագրված ցաք ու ցրիվ տեղեկություններից կարելի է եզրակացնել, որ Արփիարյանը հիմնականում մեղադրվել է հետևյալ հարցերում. մասնակցություն Կ. Պոլսում կազմակերպված հեղափոխական խմբակներին, գործակցություն Գում Գաբրիի ցույցին, հանցավոր կապ կովկասի և հատկապես «Մշակ»-ի խմբագրության հետ:

Ուշագրավ է, որ դատարանում Արփիարյանի դատապաշտպանը եղել է Գ. Ջոհրապը:

Ջերբակալություններին անդրադարձավ եվրոպական մամուլը: Համիդը դիմեց խորամանկության, նա որոշեց բանտից ազատել բանտարկյալներից ամենահայտնիներին՝ բացի Արփիարյանից, ցույց տալու համար Եվրոպային իր «հայրական» վերաբերմունքը հպատակների նկատմամբ: Միաժամանակ ներքին գործերի նախարարության միջոցով հայոց եկեղեցում կազմակերպվում է բանտից ազատվածների հրապարակային մեղայականը:

Մինչև ս. խաչ եկեղեցում կատարվում էր այս նվաստացուցիչ ծիսակատարությունը, Արփիարյանը բանտում էր: Նա ազատ արձակվեց հաջորդ օրը՝ հունվարի 6-ին: Դրանից Արփիարյանը շահե՞ց, թե՞ տուժեց: Դժբախտաբար տուժեց: Սուլթանի մարդիկ ցանկացել էին, որ նա առանձին ազատվի և մեղայականն էլ տպագրի իր իսկ հրատարակած թերթում: Արփիարյանը առաջին անգամ կյանքում հարկադրված եղավ կատարել իր կամքին հակառակ մի արարք, որը մինչև իր մահվան օրը հալածեց նրա երևակայությունը, իսկ թշնամիների կողմից օգտագործվեց որպես դավաճանության, կամքի թուլության ապացույց:

Նազըմ փաշան անձամբ այցելելով նրան առաջարկեց «Արևելք»-ում տպագրել իր շնորհակալության խոսքը ուղղված օգոստոսափառ կայսրին: Արփիարյանը կարո՞ղ էր հրատարակել այդ պահանջը կատարելուց: Անշուշտ կարող էր: Բայց արդյունքը կլիներ այն, որ նա կմնար բանտում կամ կաքսորվեր: Արփիարյանը, որ այնքան հանդուգմ մարտնչումներ էր ունեցել կառավարության դեմ, դժվար թե վախենար այդ պատժից: Թուլամորթությունը չէր, որ նա առերես ընդունեց Նազըմ բեյի առաջարկը, այլ այն, որ դրանով նա հնարավորություն կունենար հենց հաջորդ օրվանից դարձյալ լինելու ամբիոնի վրա, խոսելու ընթերցողների հետ այն «արտի» լեզվով, որն արդեն ստեղծվել էր մամուլի և ընթերցողների միջև: Համիդյան պայմաններին ծանոթ յուրաքանչյուր ոք լավ գիտեր, որ Արփիարյանի մեղայականը հարկադրված ակտ էր, ոչ մի կապ չուներ նրա ոչ զգացումների և ոչ էլ քաղաքական համոզմունքների հետ:

Ուշադիր ընթերցողը տեսնում է, սակայն, որ տեքստը այնքան էլ «մեղայական չէ» և ինչպես նշում է արևմտահայ գրականության լավագույն մասնագետներից մեկը՝ Գառնիկ Ստեփանյանը. «Այն ըստ էության մի պամֆլետ է՝ սուլթանի հասցեին»<sup>1</sup>: Այն ամբողջովին կառուցված է երկդիմի մտքերով, համեմված երգիծանքով ու հումորով: Ըստ էության նա անխնա ծաղրում է սուլթանին, քայց այնպիսի վարպետությամբ, որ համիդյան գործակալները չկարողանան մեղադրել հեղինակին: Ահա մի նմուշ.

«Եթե տիեզերք կըսանչանա նորին վեհափառության վրա, կը հուզվի, կը խանդաղատի նաև նորա անասնամա գթասրտության համար, այնպես, որ կընանք ըսել, որ երբ նախախնամությունը պարզեց օսմանյան երկրին Սուլթան Համիդ, նորա ծնած օրը եթե Աստված մատը նորա ճակատին դնելուն իմաստություն պարզեց, դրկեց նաև երկու հրեշտակներ գթության և բարության հրեշտակներն, հսկել օրորոցին մոտ»<sup>2</sup>:

Չնայած տպագրած «մեղայականին»՝ «Արևելք» թերթը փակվեց: Արփիարյանը ստիպված եղավ իր գրչակից ընկերների՝ Երվանդ Օտյանի և Լևոն Բաշալյանի հետ 1891 թ. հուլիսից հիմնել նոր պարբերական՝ «Հայրենիք» օրաթերթը: Այդ ժամանակներում, բնական է, թերթը չէր կարող իր ծրագրերը հրապարակել: Առաջնորդողում կարդում ենք. «Եթե պիտի ըլլա սպարաճքին թերթը, պիտի ըլլա նամանավանդ խրճիթին թերթը, եթե պիտի ըլլա զարգացյալին թերթը, պիտի ըլլա նամանավանդ մտքով հետամնացին թերթը»<sup>3</sup>:

«Հայրենիքը» անմիջապես մեծ ժողովրդականություն է վայելում, և դա էր պատճառը, որ միայն 1891 թվականին երեք անգամ թերթը փակվում է տարբեր ժամկետներով: 1892 թ. մարտի 12-ին «Հայրենիքը» հերթական անգամ փակվում է այսպիսի սպառնալիքով.

«Եթե նորեն ըմբոստանաք, այլ աս անգամ ջնջում է ու ոչ դադարում»<sup>4</sup>:

<sup>1</sup> Գ. Ստեփանյան, Արփիար Արփիարյան, Եր., 1955, էջ 216:

<sup>2</sup> «Արևելք», 1891, No 1:

<sup>3</sup> «Հայրենիք», 1891, No 1:

<sup>4</sup> Գ. Ստեփանյան, Աջվ. աշխ., էջ 219:

Այս տարիներին ևս Արփիարյանը շարունակում է համագործակցությունը հնչակցանների հետ, իսկ 1895 թ. սկզբներից դառնում է վերակազմյալ թեև առաջնորդը՝ պաշտոնապես անդամագրվելով հնչակյան կուսակցությանը:

Արփիարյանի քաղաքական գործունեությունը ընթանում էր հակառակորդների սպառնալիքների տակ: Գրչակից ընկերները հորդորում էին թողնել կուսակցական գործունեությունը և նվիրվել գրակնությունը: Երվանդ Օսյանը պատմում է. թե ինչ է պատասխանել Արփիարյանը իր առաջարկությանը. «Երվանդ, ըսավ, ի՞նչ ընեմ. եթե գործեն քաշվիմ, իմ տեղս խենթեր պիտի գան, որոնք իրենց հախտոն գործերով նորանոր քարոզերու պատճառ պիտի լլլան, իսկ եթե ես մեջերհն ըլլամ գոնե այդ բանը կարգիլեմ»<sup>1</sup>:

Թեև թ հրատարակելը դառնում էր անհնար: Խմբագրությունները կառավարությունից տառնում էին միատեսակ խմբագրական առաջնորդղներ, որոնց բովանդակությունը մոտավորապես հետևյալն էր. հայերը, չըմբռնելով օսմանյան կառավարության կողմից իրենց տրված առավելությունների նշանակությունը, վերջին ժամանակներս սկսել են թշնամական վերաբերմունք ընդունել կաշտության դեմ «ենթարկվելով մի քանի հայ արիկաների խորհուրդներին»:

Ըստ էության այս հողվածները արդարացնում էին Հայաստանում կառավարված ամբողջ բարբարոսությունը և պատասխանատվությունը գցում մի քանի հայերի վրա:

Հասկանալի է, որ այսպիսի ազգավնաս առաջնորդող ոչ մի հայ թեևր, մասնավաճող «Հայրենիքը» չէր կարող հրատարակել ու չեն հրատարակել:

Կառավարությունը դիմում է այլ միջոցի: Նյութերը խմբագրություններին է ուղարկում որպես կառավարական գրություններ՝ արդեն տտրագրված ու կնքված: Այս դեպքում ոչ ոք չէր կարող դիմադրել, դա դիտվում էր որպես հակահառավարական ելույթ: Համառեղն իզուր էր: «Հայրենիքը» դիմում է հնարավոր վերջին միջոցին: Նա դիտմամբ այդ կարգի լուրերը հրատարակում է բոլորից ուշ. 3-4 օր հետո, երբ մայրաքաղաքի բոլոր թուրքերեն, հունարեն, հայերեն թերթերը արդեն հրատարակած էին լինում լուրը, և այն կորցրած էր լինում իր հետաքրքրությունը:

Իսկ կուսակցությունների միջև պայքարը օրեցօր սրվում էր: 1895 թ. դեկտեմբերի 25-ին Արփիարյանը տտանում է դաշույնի հարկածներ: Առաջին այցելուները եղել են Գրիգոր Զոհրապյան ու Երվանդ Օսյանը:

«Իր գունատ դեմքը սղ ալվելի տեգունած էր, բայց աչքերը սուլորակաճի պես կը տնկասին չարածիրոնե:

- Ըահնազարը անմիջապես պետք է գտնաս ու բերես, ըսավ ինձի, կարելի է կամտանի, խոսելիքներ ունիմ իրեն:

- Բայց մեռնելու երևույթ չունիս, ըսի խեղազով»<sup>2</sup>:

1896 թ. սկզբներին սուլթանական կառավարությունը անցավ ավելի դաժան հպածանքների: Համիդը մի բանում համոզված էր, որ առաջին հերթին պետք է առաքելից հանել հայ մտավորականներին: Ոմանց հաջողվում է փախչել, ոմանք էլ բանտ են նետվում: 1896 թ. մարտ ամսին ֆրանսիական մի նավով արտասահման է անցնում Արփիար Արփիարյանը, երանից առաջ Փարիզ էր մեկնել Արշակ Զուպանյանը, սույս էվրոպա անցան Երվանդ Օսյանն ու Տիգրան Կամսարականը:

Տասներկու տարով ընդհատված է պոլյախիզ գրական-մշակութային կցանքը՝ այն տեղափոխվելով արտասահմանյան գանազան երկրներ: Սկսվում է Արփիարյանի գրական, քաղաքական գործունեության նոր շրջանը:

**К. Г. ГРИГОРЯН - Общественная и политическая деятельность Армяра Армавире в 90-х годах XIX века.** - Видный западноармянский прозаик и публицист Армяр Армаврян начал свою политическую деятельность в 90-е годы XIX века в Константинополе. В период жестокой реакции при Абдуле Гамиде А. Армаврян вступил в ряды партии "Тичакян" и принял активное участие в демонстрациях, направленных против султана.

<sup>1</sup> Ե. Օսյան, Երվանդ ծով. հ. 4, էք. 1962 էք 142:

<sup>2</sup> Ե. Օսյան, Երվ. աչիս, հ. 3, էք. 1962 էք 53: